Սասմայ քեաղքի դեաւին[1]) կ'էնին. իս չիմ կէրի, իմ կվաթ չի յաղ-թը, կ'ըլնիս, կ'կեաս, խասնիս։

Մհեր էսաց.—Ա՛յ կնիկ, կ'առնիս զիմ գիւրզ, տիւռ կ'դնիս, էստեղ կ'մնայ. ինչ փալաւանքտիր կ'կեան, գեորզ կ'տըսնին վեար տռան, քեզի նեղութին չին իտայ, կ'ասին՝ Մհեր տան քի-նուկ ի։

Էլաւ, բար իտու, Սասմայ քեաղաք էկաւ. որ էկաւ, Սասմայ քեաղքին մօտ խասցաւ, էլաց, դժարացաւ։ Ցիրիկուան վխտին էր, խրօխպէր տիւռ շինիր էր, քինուկ էր,—կանչից.

«Խէրախութ խրօխպէր, վիր իլի*),
Քիւ քինուց վիր իլի,
ամ հալա վիր իլի»։

Ձէն ընկաւ խրօխպօր ականջ, մեանչ քինուն էսաց.—Մէկ բա-րակ ձէն էկաւ, դիպաւ ականջիս, իմ խուր[2]) քինու մէջէն զար-կաւ։

Կնիկ էսաց.—Ա՛յ ջանմ, ինչ ձէն. էսաց՝ Սասմայ տուն ի. տեռռ շինիր իս, հալա կ'վախանամ։

Խրօխպէր էսաց.—Հալբաթ կ'վախանամ, ծիրացիր իմ, իմ ազ-գական մօտէս զատնացած։

Ցիր ըմ էլ կինաց յէրտսի վերայ։ Կանչից.

«Խէրախութ խրօխպէր, վիր իլի**),
Իմ թագաւորութին գետին իմ դրի,
Քեաղաք իմ գեորզին թասլիմ իմ էրի,
Իմ գեորզ Գիւրջու աղջկան թասլիմ իմ էրի»։

Խրօխպէր վազից, կինաց, Մհերի գլեոխ պագնից։

Էսաց.—Ցիւ ի՞նչըխ իս թասլիմ էրի, քիւ թագաւորութին թողի, էկի։

Էսաց.—Իս անցկուն իմ էկի, մէկ Աստուած խաբար իլի, մէկ հրիշտակ։

---

[1]) Կռիւ, վէճ։ [2]) Խոր։

*) Երգ է։ **) Երգ է։